

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ



Մարզկենտրոնը՝

ք. Հրազդան

Տարածաշրջանները՝

Հրազդան,

Կոտայք,

Նաիրի

Քաղաքները՝

Հրազդան,

Աբովյան,

Չարենցավան,

Եղվարդ,

Բյուրեղավան,

Նոր Հաճն,

Մաղկաձոր

Տարածքը	2 086 քառ.կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	7.0 %
Քաղաքային համայնքներ	7
Գյուղական համայնքներ	60
Քաղաքներ	7
Գյուղեր	62
Բնակչության թվաքանակը 2014թ. տարեվերջին	255.0 հազ.մարդ
<i>այդ թվում՝</i>	
քաղաքային	138.5 հազ.մարդ
գյուղական	116.5 հազ.մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2014թ.	8.5%
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	54.3%
Գյուղատնտեսական նշանակության հողեր	154 627.6 հա
այդ թվում՝ վարելահողեր	37 765.8 հա

ՀՀ Կոտայքի մարզը գտնվում է հանրապետության կենտրոնում: Այն հարավ-արևմուտքից սահմանակից է մայրաքաղաքին, արևմուտքից՝ ՀՀ Արագածոտնի, հյուսիսից՝ Լոռու, հյուսիս-արևելքից՝ Տավուշի, արևելքից՝ Գեղարքունիքի և հարավից՝ Արարատի մարզերին:

ՀՀ Կոտայքի մարզի տարածքով են հոսում Հրազդան և Ազատ գետերը: **Հրազդան գետը** (նախկին անվանումը՝ Զանգու) Արաքս գետի ձախ վտակներից է (երկարությունը՝ 141 կմ): Գետի համակարգում կա 340 վտակ, որոնցից 25-ն ունեն 10 կմ-ից ավելի երկարություն: Գետի խոշոր վտակներից են Մարմարիկը, Ծաղկաձորը, Արայի գետը, Գետառը:

Ազատ գետը նույնպես Արաքսի ձախ վտակներից է (երկարությունը՝ 55 կմ): Սկիզբ է առնում Գեղամա լեռնաշղթայից (հիմնականում սնվում է ստորերկրյա ջրերով): Գետի ջրերն օգտագործվում են հիմնականում ոռոգման նպատակով:

Մարզը հարուստ է հանքային ջրերով, դրա վկայությունն են «Բջնի» և «Արգնի» հանքային ջրերը:

Մարզի տարածքում են գտնվում Գեղամա լեռների փեշերը, Ծաղկունյաց լեռնաշղթան, Հատիս և Արայի լեռները: Հատիս լեռը (նախկին անվանումը՝ Շամիրամի) կոնաձև հրաբխային զանգված է (բարձրությունը՝ 2 528 մ): Լեռը ծածկված է մարգագետնատափաստանային բուսականությամբ:

Արայի լեռը (բարձրությունը՝ 2 577 մ)՝ հանգած հրաբխային զանգված է, գտնվում է Արագած լեռից արևելք՝ Քասախ և Հրազդան գետերի միջև:

Մարզի հարթավայրերն են՝ Եղվարդի հարթավայրը (գտնվում է ծովի մակերևույթից 1 200 – 1 300 մ բարձրության վրա) և Հրազդանի սարահարթը (ծովի մակերևույթից՝ 1 700 – 1 800 մ բարձրության վրա):

Մարզի տարածքի կենտրոնական մասով անցնում են երկրի համար առանցքային նշանակություն ունեցող Երևան–Հրազդան–Սևան ավտոմայրուղին և Երևան–Հրազդան–Իջևան երկաթգիծը:

2014թ.-ին **մարզի տնտեսության** հիմնական ճյուղերի տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 13.0 %,
- գյուղատնտեսություն՝ 6.0 %,
- շինարարություն՝ 4.8 %,
- մանրածախ առևտուր՝ 2.9 %,
- ծառայություններ՝ 3.7 %:

ՀՀ Կոտայքի մարզը համեմատաբար զարգացած ու բազմաճյուղ տնտեսություն ունեցող մարզերից է:

Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողն **արդյունաբերությունն է**: Մարզը բացառիկ դեր ունի հատկապես էներգետիկայի բնագավառում: Այստեղ են գտնվում էլեկտրաէներգիայի արտադրության 2 խոշոր կազմակերպություն:

Մարզի արդյունաբերության մյուս հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել զարգացած են հետևյալ ճյուղերը.

ա) սննդամթերքի և ըմպելիքի արտադրություն (մսի և մսամթերքի մշակում և պահածոյացում, մրգերի և բանջարեղենի մշակում և պահածոյացում, կաթնամթերքի, ալյուրի, ըմպելիքի արտադրություն),

բ) ոչ մետաղական հանքային այլ արտադրանքի արտադրություն (ապակու և դրանից պատրաստվող իրերի արտադրություն, ցեմենտի արտադրություն),

գ) մետաղագործական արդյունաբերություն և մետաղե արտադրատեսակների արտադրություն (պողպատի և թուջի ձուլում),

դ) կահույքի արտադրություն, այլ կատեգորիաների մեջ չմտցված պատրաստի իրերի արտադրություն (ոսկերչական իրերի և կից ապրանքների (ադամանդի) արտադրություն):

Մարզի գյուղատնտեսությունը մասնագիտացած է թռչնաբուծության մեջ: Մարզի տարածքում են գործում հանրապետության 3 խոշոր թռչնաֆաբրիկաներ:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (ճոպանուղի):

Արմյան քաղաքը (2014թ. տարեվերջին՝ 44.3 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 18 կմ հեռավորության վրա: Հանրապետության ամենաարագ աճող քաղաքներից է, արդյունաբերական խոշոր կենտրոններից մեկը:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը **մշակող արդյունաբերությունն է**, որի մեջ գերակշիռ տեղ է զբաղեցնում գարեջրի արտադրությունը:

Բյուրեղավան քաղաքի (2014թ. տարեվերջին՝ 9,5 հազ. բնակիչ, գտնվում է Երևանից 24 կմ հեռավորության վրա) արդյունաբերության հիմնական ուղղությունը **մշակող արդյունաբերությունն է**,

որի մեջ գերակշիռ տեղ է զբաղեցնում ոչ մետաղական հանքային և այլ արտադրանքի արտադրությունը (ապակե տարայի, ձենապակուց և հախճապակուց տնտեսական կենցաղային արտադրատեսակների արտադրություններ):

Եղվարդ քաղաքը (2014թ. տարեվերջին՝ 11,8 հազ. բնակիչ) գտնվում է Արայի լեռան հարավային ստորոտում, հեռավորությունը Երևանից 18 կմ է:

Քաղաքի **արդյունաբերության** հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ հատկապես առանձնանում է սննդամթերքի և ըմպելիքի արտադրությունը (թորած ակոհոլային խմիչքների (կոնյակի), կաթնամթերքի, կաշվե արտադրատեսակների և կոշիկեղենի արտադրությունը):

Քաղաքի տնտեսական կյանքում էական դեր ունի նաև **գյուղատնտեսությունը**, որի մեջ հիմնական ուղղությունը հացահատիկի մշակությունն է:

Նոր Հաճն քաղաքի (2014թ. տարեվերջին՝ 9,4 հազ. բնակիչ, հեռավորությունը Երևանից 30 կմ է) արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ ունի կահույքի և ուրիշ խմբավորումներում չներառված այլ արտադրատեսակների արտադրությունը (ոսկերչական արտադրատեսակների (ադամանդի) արտադրությունը):


Հրազդան քաղաքի (2014թ. տարեվերջին՝ 41,7 հազ. բնակիչ) հեռավորությունը Երևանից 50 կմ է: Գտնվում է Հրազդան գետի վերին հոսանքի ձախ ափին: Հայտնի է որպես արդյունաբերական կենտրոն: Այստեղ է գտնվում Հրազդանի ՋԷԿ-ը, որը հզորագույնն է ՀՀ-ում: Արդյունաբերության մյուս ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ ունի ոչ մետաղական հանքային և այլ արտադրանքի արտադրությունը (մասնավորապես՝ ցեմենտի արտադրություն):

Չարենցավան քաղաքը (2014թ. տարեվերջին՝ 20,6 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 36 կմ հեռավորության վրա, Հրազդան գետի ձախ ափին: 1953թ. ՀԷԿ-ի շինարարության ավարտից հետո քաղաքում կառուցվեցին մի շարք խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ և Չարենցավանը դարձավ հանրապետության կարևոր արդյունաբերական կենտրոն:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ գերակշիռ տեղ ունի մետաղագործական արդյունաբերությունը և պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունը (պողպատի և թուջի ձուլում):

Ծաղկաձոր քաղաքի (2014թ. տարեվերջին՝ 1,2 հազ. բնակիչ, գտնվում է Երևանից 55 կմ հեռավորության վրա) կլիման մեղմ է և առողջարար: Առողջարանային քաղաք է:

ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ, 2015թթ. հունվարի 1-ի դրությամբ



ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ

	Քանակը				
	2010	2011	2012	2013	2014
Մանրածախ առևտրի օբյեկտներ, ընդամենը	1 635	1 587	1 545	1 347	1 193
<i>այդ թվում՝</i>					
խանութներ	747	792	841	804	854
կրպակներ	826	735	645	484	280
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	3	3	2	2	2
սպառողական ապրանքների շուկաներ	6	5	5	5	4
առևտրի այլ օբյեկտներ	53	52	52	52	53

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	Քանակը				
	2010	2011	2012	2013	2014
Պետական նախադպրոցական	50	48	52	54	54
Պետական հանրակրթական	105	104	104	104	104
Ոչ պետական հանրակրթական	1	1	1	1	1
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	24	24	24	24	25
Պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական ¹	6	6	6	6	8
Պետական միջին մասնագիտական ուսումնական	6	6	6	6	6
Ոչ պետական բարձրագույն ուսումնական	2	2	2	2	1

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՑՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2015թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ*
Հրազդան	ք. Հրազդան	41 664
Աբովյան	ք. Աբովյան	44 314
Չարենցավան	ք. Չարենցավան	20 545
Եղվարդ	ք. Եղվարդ	11 847
Բյուրեղավան	ք. Բյուրեղավան	9 472
Նոր Հաճն	ք. Նոր Հաճն	9 383
Ծաղկաձոր	ք. Ծաղկաձոր	1 240

ԳՑՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՑՆՔՆԵՐ

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2015թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ**
Հրազդանի տարածաշրջան			
1	Ալափարս		2 343
2	Աղավնաձոր		1 298
3	Արզական		2 811
4	Արտավազ	• Արտավազ • Փյունիկ	1 028
5	Բջնի		2 894
6	Լեռնանիստ		2 920

¹ Ներառյալ այն միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, որոնք իրականացնում են նախնական (արհեստագործական) ծրագիր:

* Քաղաքային համայնքների բնակչության թվաքանակը ներկայացվել է ՀՀ 2011թ. մարդահամարի հիմքով վարվող ընթացիկ հաշվառմամբ:

**Գյուղական համայնքների այս տվյալների սկզբնաղբյուրը՝ գյուղական համայնքների կողմից տարեկան կտրվածքով ներկայացվող «Գյուղական բնակչության սեռատարիքային կազմը» պետական վիճակագրական հաշվետվություններն են: Այդ սկզբնաղբյուրներով ՀՀ 866 գյուղական համայնքների մշտական բնակչության թվաքանակների հանրագումարը՝ ամբողջությամբ ըստ մարզերի ունի որոշակի շեղում բնակչության ընթացիկ հաշվառման համանուն տվյալներից, որոնք խարսխված են ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ կառավարության արձրթեր ՀՀ ոստիկանության վարչական ռեզիստրների տվյալների վրա (շեղումը՝ 01.01.2015թ.-ի դրությամբ ՀՀ մասշտաբով՝ կազմել է +12.5%): Շեղումը հիմնականում պայմանավորված է գուղական համայնքների միջև խնդրո առարկա տեղեկատվության փոխանակման, համադրման և անվանական տվյալների մակարդակով ստուգաճշտման համակարգի բացակայությամբ:

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2015թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ**
7	Կարենիս		853
8	Հանքավան		101
9	Մարմարիկ		755
10	Մեղրաձոր	• Մեղրաձոր • Գոռզոչ (Կորչյու)	2 631
11	Ջրառատ		571
12	Սոյակ		2 493
13	Քաղսի		2 402
14	Ֆանտան		1 025
Կոտայքի տարածաշրջան			
1	Ակունք		2 198
2	Առինջ		5 978
3	Արամուս		3 674
4	Արզնի		2 482
5	Բայաշոյիս		3 537
6	Գառնի		7 400
7	Գեղաղիք		740
8	Գեղաշեն		4 204
9	Գեղարդ		368
10	Գետարզել		799
11	Գողթ		2 058
12	Զառ		1 481
13	Զովաշեն		171
14	Զովք		1 048
15	Կաթնաղբյուր		747
16	Կամարիս		2 428
17	Կապուտան		1 277
18	Կոտայք		2 044
19	Հատիս		308
20	Հացավան		578
21	Ձորաղբյուր		2 409
22	Մայակովսկի		2 137
23	Նոր ցյուղ		1 548
24	Նուռնուս		634
25	Ողջաբերդ		1 022
26	Պտղնի		1 602
27	Ջրաբեր		435
28	Ջրվեժ		6 165
29	Սևաբերդ		255
30	Վերին Պտղնի		792
Նաիրիի տարածաշրջան			
1	Արագյուղ		1 140
2	Արզել		3 157
3	Բուժական		1 755
4	Գետամեջ		787
5	Զովունի		5 765
6	Զորավան		1 665
7	Թեղենիք		587
8	Մրգաշեն		2 277
9	Նոր Արտամետ		1 248
10	Նոր Գեղի		6 131
11	Նոր Երզնկա		1 870
12	Պոռչյան		5 212
13	Սարայանջ		375
14	Քանաքեռավան		3 740
15	Քասախ		5 778
16	Քարաշամբ		716

**ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2014թ.**

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք ¹	տղամարդիկ ¹
Բնակչությունը, մարդ	10 000	5 159	4 841
Օնվաճներ, մարդ	148	69	79
Մահացածներ, մարդ	89	41	48
Ամուսնություններ	70	X	X
Ամուսնալուծություններ	14	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով,քառ.մ	28.1	X	X
Կրթության ոլորտ, հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
նախադպրոցական	252	119	133
հանրակրթական	1 322	632	690
երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	158	106	52
նախնական մասնագիտական (արհեստագործական)	32	7	25
միջին մասնագիտական	52	23	29
բարձրագույն մասնագիտական	9	5	4
Առողջապահության ոլորտ՝			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	33 491
Մարզիկներ, մարդ	154	15	139
Զբաղվածներ, մարդ	3 763	1 487	2 276
նրանցից՝ գիտական հիմնարկներում	0.0	0.0	0.0
նրանցից՝ գիտության դոկտոր	-	-	-
գիտության թեկնածուներ	0.0	0.0	0.0
ուսուցիչներ	122	105	17
բժիշկներ	20
միջին բուժանձնակազմ	42
Գործազուրկներ, մարդ	1 113	665	448
Սոցիալական ապահովության ոլորտ			
ընդամենը կենսաթոշակառուներ,տարեվերջի դրությամբ, մարդ	1 377	813	564
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	359	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	16 589
թատրոն	-	-	-
համերգ	-	-	-
թանգարան	506
Իրավական ոլորտ			
հանգագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	64	X	X
այդ թվում՝ ոչ մեծ ծանրության	30	X	X
միջին ծանրության	19	X	X
ծանր	14	X	X
առանձնապես ծանր	1	X	X

¹ Ցուցանիշները հաշվարկային են: